Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում

Անի Արղության
Հայաստանի ազգային գրադարան

XV-րդ դարի կեսերին գերմանացի Յոհան Գուտենբերգը ստեղծեց իր շարժական տպագրահաստոցը, որը հիմք դրեց տպագրական հեղափոխությանը Եվրոպայում և համարվում է համաշխարհային հայտնագործություններից մեկը: Հայերն առաջիններից էին, որ օգտվեցին Գուտենբերգի գյուտից և 1512 թվականից սկսած ողջ աշխարհում, որտեղ կային հայկական գաղթօջախներ, հիմնադրեցին հայկական տպարաններ և լույս աշխարհ եկան հայերեն գրքեր: Հայերեն առաջին տպագիր գրքերի բովանդակությունն արդեն վկայում է, որ հայ տպագրիչների և հրատարակիչների գլխավոր նպատակը նյութական շահը չէր, այլ օտարալեզու և օտար միջավայրում ձուլման վտանգիառաջ կանգնած հային՝ իր լեզվին ու ազգային ավանդույթներին ամուր շաղկապելու, մայրենի լեզվով գիր ու գրականություն մատուցելու ազգապահպան վեհ գործը:

1701 թ. Կ. Պոլսում վանահայր Մխիթար Սեբաստացու կողմից հիմնվեց Մխիթարյան միաբանությունը: Միաբանությունն իր գործունեության ընթացքում հրատարակել է բազմաթիվ հայագիտական-բանասիրական, կրոնական և գիտական այլ աշխատություններ: 1717 թ. Միաբանությունը հաստատվել է Վենետիկի մերձակա Սուրբ Ղազար կղզում: Մխիթարյան է կոչվել Սեբաստացու մահվանից հետո: 1811 թ. հիմնադրվել է Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որը սկսել է կաթոլիկ կրոնաաստվածաբանական աշխատություններհրատարակել, սակայն աստիճանաբար սկսել էհրատարակել նաև հայագիտական, պատմագիտական, բանասիրական և լեզվաբանական երկեր: Մխիթարյան միաբանությունը հրատարակել է մեկ տասնյակից ավելի պարբերականներ(«Տարեգրություն»(1799-1802թթ.), «Եղանակ բյուզանդյան»(1803-1820թթ.), «Եվրոպա»(1847-63թթ.) և այլն, որոնց մի մասը լույս է տեսնում և այսօր («Բազմավեպ»(1843թ-ից),«Հանդես ամսօրյա»(1887-ից),«Մխիթարյան

ընտանիք»(1969-ից) և այլն:[1] Այսօր Մխիթարյան միաբանությունը գիտական, մշակութային, ազգագրական գործունեությանը զուգընթաց խթանել է հայ լրագրության զարգացմանը և դարձել է հայ մամուլի ոչ միայն ստեղծման, այլև կայացման ամենահեղինակավոր օջախներից մեկը:[2]

Հայ պարբերական մամուլի պատմությունն սկզբնավորվել է 1794 թվականին: Առաջին «Ազդարար»(1794-1796) պարբերականը Հ. Շմավոնյանի խմբագրությամբ լույս տեսավ հայրենիքից դուրս, Հնդկաստանի Մադրաս քաղաքում: Այն ազդարարեց Եվրոպական չափանիշներով հայ ժողովրդի քաղաքակրթական վիճակի մի նոր, բարձր աստիճանի լինելիության իրողությունը: Անցած ավելի քան 200 տարիների ընթացքում Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում հրատարակվել են շուրջ 5000 պարբերականներ, որոնք անգնահատելի նպաստ են բերել հայ ժողովրդի , հայ հասարակական-քաղաքական կյանքի ու հոգեկերտվածքի ձևավորման գործում:

Յոհան Գուտենբերգի հայտնագործությունից հետո գլխավոր բեկումնային նորույթը՝ համաշխարհային տարածում գտած թվային տեղեկատվական համակարգն է, որի կիրառումը ներկայիս ժամանակներում հեղափոխական նշանակություն ունեցավ և լիովին վերափոխեց գրադարանների ավանդական գործունեությունը:

Հայաստանի ազգային գրադարանը ձեռնարկեց «Հայ գիրք» և «Հայ մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանների ձևավորումը: «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում ամփոփվում են աշխարհի տարբեր երկրներում 1512 թվականից մինչև մեր օրերը տպագրված հայերեն, նաև հայատառ թուրքերեն գրքերը: «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարաններում ներկայիս ժամանակ տեղադրվում են աշխարհի տարբեր անկյուններում գտնվող հայկական հնատիպ

---

[1] 1701թ. այս օրը Կ. Պոլսում վանահայր Մխիթար Սեբաստացու կողմից հիմնվեց Մխիթարյան միաբանությունը: Աղբյուրը՝ CrossNews.am
http://www.crossnews.am/2012/09/10/1701%D5%A9-%D5%A1%D5%B5%D5%BD-%D6%85%D6%80%D5%A8-%D5%AF-%D5%BA%D5%B8%D5%AC%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4-%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80-%D5%B4%D5%AD%D5%AB%D5%A9%D5%A1%D6%80-%D5%BD%D5%A5/

[2] ԱրաՆախշքարյան: Հայմամուլը 217 տարեկան: Աղբյուրը՝
http://nakhshkaryan.blogspot.com/2012/10/217.html

արժեքավոր գրքերիև պարբերականների թվայնացված տարբերակները թե՛ գրադարաններից, թե անհատ մարդկանց հավաքածուներից:

Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարանի մուտքը գրադարանային համակարգ առայժմ նորույթ էև հեռանկարային: Ակնկալվում է, որ ապագայում այն կհանգեցնի գրադարանում կուտակված գիտական ժառանգության՝ ատենախոսությունների օգտագործմաննոր և մատչելի ձևերի ստեղծմանը:

<<Հաաստանի ատենախոսությունների Բաց մատչելիության պահng = Open Access Repositori of the Armenian Electronic Theses and Dissertations (Armenian ETD-OA) = Репозиторий диссертаций Армении открытого доступа >>կիրառում է <<Ստեղծագործական համայնքներ>> հեղինակային իրավունքի արտոնագիրը, համաձայն որի հեղինակները պահպանում են իրենց հոդվածների հեղինակային սեփականության իրավունքը: Հեղինակը թույլ է տալիս ցանկացած անձի բեռնաթափել, օգտագործել, վերատպել, ձևափոխել, տարածել հոդվածներն այնքան ժամանակ, քանի դեռ հոդվածի իրական հեղինակ(ներ)ի և սկզբնաղբյուրի վրա կատարվում է հղում: Արտոնագրման սույն տեսակը նախատեսվել է, որպեսզի հեշտացվի Բաց մատչելիության հրատարակչական մոդելի տարածումը: Գիտական աշխատանքների համար կիրառելով արտոնագրման այս մոդելը, ստեղծվում են նախապայմաններ հրապարակումներն ազատորեն հասանելի դարձնելու հասարակությանը:

Գոյություն ունի նաև հեղինակի համաձայնագիրը, ըստ որի

1. Հեղինակը հավաստում է, որ ԲՈՀ ներկայացվող ատենախոսությունը բնօրինակ է և չի հակասում ՀՀ օրենսդրության պահանջներին և այլ անձանց հեղինակային իրավունքներին:
2. Հեղինակը հավաստում է, որ ատենախոսության էլեկտրոնային տարբերակը կրկնում է ԲՈՀ-ին հանձնած թղթային օրինակին:
3. Հեղինակը անհատույց Հայաստանի ազգային գրադարանին է տրամադրում իր ատենախոսությունը՝ <<Հայաստանի ատենախոսությունների բաց

մատչելիության>> (ՀԱԲՄ) պահոցումհանրային օգտագործման նպատակով տեղադրելու համար:[3]

2015 թվականին ՀԱԳ(Հայաստանի ազգային գրադարան)-ի, ԲՈՀ(Բարձրագույն որակավորման հանձնաժողով)-ի, ՀԷԳԿ(Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում)-ի համատեղ ջանքերով թողարկվեց ատենախոսությունների բազմաառարկայական պահոցը, որում տեղ են գտել Հայաստանի անկախացումից հետո Հայաստանում պաշտպանված ատենախոսությունները:

Այն հասանելի է օգտատերերին բաց մատչելիության սկզբունքով: Այս ծրագիրն առաջարկվել է Հայաստանի ազգային գրադարանի կողմից:

<<Բարձրագույն որակավորման հանձնաժողովի>> հետ կնքված պայմանագրի համաձայն ՀՀ գիտական աստիճանաշնորհման համակարգի գործունեությանն աջակցելու նպատակով ՀԱԳ-ը 2015 թ. ընթացքում թվայնացրել է 1056 անուն ատենախոսություն: Իսկ 2016 թվականի ընթացքում՝ 619 ատենախոսություն:Ըստ ԲՈՀ-ի կանոնակարգի՝ ատենանախոսությունները հաստատվելուց հետո ուղարկվում են ազգային գրադարան: Սկսած 1988 թվականի ատենախոսություններից առ այսօր նրանք տեղադրվում են <<Հայաստանի ատենախոսությունների Բաց մատչելիության պահոցում>>: Տարբեր կայքերից ներբեռնվում են սեղմագրեր և տեղադրվում պահոցում: Ներկա պահին գրառումների քանակն է՝ 3469:

<<Բարձրագույն որակավորման հանձնաժողովի>> տեղեկացմամբ՝ պատրաստվել է մի հարցաթերթիկ, որը ներկայացվում է ատենախոսությունները պաշտպանած գիտնականներին: Նրանց առաջարկվում է տալ համաձայնություն իրենց ատենախոսությունը <<Հայաստանի ատենախոսությունների Բաց մատչելիության պահոցում>>տեղադրելու համար:

<<Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարանը>> հասանելի է http://etd.asj-oa.am/հասցեից:

<<Հայաստանի ատենախոսությունների Բաց մատչելիության պահոցում>> փնտրումը կարելի է իրականացնել հետևյալ կերպ՝

[3] http://etd.asj-oa.am/information.html

Որպես լռակյաց արտածում գրառումներն արտածվում են «Home»[4] ձևաչափով (տե՛ս Հավելված 1-ում, կապույտ սլաքով հղումը):«Home»դաշտից կարելի է անցում կատարել դեպի «Latest Additions»[5] և «Search Reposit»[6]: Հավելված 2-ում բերված է արտածման պատկերը երբ ակտիվացված է «Browse by Year»[7]դաշտը (տե՛ս կանաչ սլաքով նշված հղումը): Հավելված 3-ում բերված է արտածման պատկերը երբ ակտիվացված է «Browse by subject»[8] դաշտը (տե՛ս կարմիր սլաքով նշված հղումը):Հավելված 4-ում բերված է արտածման պատկերը երբ ակտիվացված է «Browse by Author»[9] դաշտը (տե՛ս սև սլաքով նշված հղումը):Հավելված 5-ում բերված է արտածման պատկերը երբ ակտիվացված է «Authors Agreement»[10] դաշտը (տե՛ս նարնջագույն սլաքով նշված հղումը):

<<Հայաստանի ատենախոսությունների Բաց մատչելիության պահոցի>> թվայնացված բոլոր ատենախոսություններն ու սեղմագրերը տեղադրված են PDF տարբերակով՝ ազատ դիտման և բեռնաթափման հնարավորությամբ:

<<Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարանի>> սպասարկման գործառույթի հետագա զարգացումը և դրա հետ կապված նորամուծություններն անմիջապես պետք է շախկապվեն տվյալ ժամանակաշրջանի գիտատեխնիկական պահանջների սպասարկման տիրույթում:

Հավելված 1

<<Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարան>>

«Home»

[4]Home -Տուն
[5]Latest Additions-Վերջին լրացում
[6]Search Reposit-Որոնում շտեմարանում
[7]Browse by Year-Դիտումն ըստ տարիների
[8]Browse by subject-Առարկայական դիտում
[9] Browse by Author-Դիտումն ըստ հեղինակի
[10] Authors Agreement-Հեղինակի համաձայնագիր



Հավելված 2

<<Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարան>>

«Browse by Year» դիտում



Հավելված 3

<<Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարան>>

«Browse by Sobject» դիտում

Հավելված 4

<<Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարան>>

«Browse by Author»դիտում



Հավելված 5

<<Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարան>>

«Authors Agreement»

Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության պահոց = Open Access Repository of the Armenian Electronic Theses and Dissertations (Armenian ETD-OA) = Репозиторий диссертаций Армении открытого доступа

Home | Browse by Year | Browse by Subject | Browse by Author | Author's Agreement

Login | Create Account

Հեղինակի համաձայնագիր

1. Հեղինակը հավաստում է, որ ԲՈՀ ներկայացվող ատենախոսությունը բնօրինակ է և չի հակասում ՀՀ օրենսդրության պահանջներին և այլ անձանց հեղինակային իրավունքներին:

2. Հեղինակը հավաստում է, որ ատենախոսության էլեկտրոնային տարբերակը կրկնում է ԲՈՀ-ին հանձնած թղթային օրինակին:

3. Հեղինակը անհատույց Հայաստանի ազգային գրադարանին է տրամադրում իր ատենախոսությունը՝ «Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության» (ՀԱԲՄ) պահոցում հանրային օգտագործման նպատակով տեղադրելու համար:

Author's Agreement

1. The Author ensures that the Dissertation is their own work, and does not break any law of Republic of Armenia or infringe any third party copyright.

2. The Author confirms that the electronic copy is identical to the Dissertation submitted to the Supreme Certifying Commission.

3. The Author grants the permission to the National Library of Armenia to deposit free of charge the Dissertation in the "Open Access repository of the Armenian Electronic Theses and Dissertations" (Armenian ETD-OA).

Согласие автора

1. Автор удостоверяет, что представленная в ВАК диссертация является оригинальной и не нарушает законы Республики Армения, а также авторские права других лиц.